

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N01

ք.Երևան

«09» «*հոկտեմբեր*» 2018թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար Վ.Ստեփանյանի մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության ղեկավոր Ա. Լոքյանի, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի գործառական դասակարգման 09 բաժնի 04 խմբի 02 դասի «04. Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրի շրջանակներում «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում անվճար ուսուցման համակարգի ուսանողներին կրթաթոշակի հատկացման պարտավորությունները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրով նախատեսված միջոցների հաշվին:

2.1.2 Կատարողին փոխանցել սահմանված կարգով հաստատված նախահաշվային փաստաթղթերը:

2.1.3 Պարբերաբար վերլուծել Կատարողի կողմից կատարված ծախսերը, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման համար:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ անմիջականորեն չմիջամտելով վերջինի գործունեությանը:

2.2.2. Կատարողից պահանջել ներկայացնելու հաշվետվություն կամ այլ պահանջվող տեղեկատվություն:

2.2.3 Պարբերաբար վերահսկել ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը:

2.2.4. Վերահսկել Կատարողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.2.5. Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Ապահովել սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

2.3.2. Ամսական կտրվածքով Պատվիրատուին ներկայացնել իր կատարած ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն:

2.3.3. Պատվիրատուի առաջին իսկ պահանջով ներկայացնել աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ հաշվետվություն կամ այլ պահանջվող տեղեկատվություն:

2.3.4. Հաշվետու տարվա վերջում վերադարձնել գումարի չծախսված միջոցները:

2.4. Կատարողը իրավունք ունի՝

2.4.1. Իր կողմից իրականացվող աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Պատվիրատուին:

2.4.2 Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրով Կատարողին պանավորությունները կատարելու համար նախատեսված աջակցությունը կազմում է 40 864 000 (քառասուն միլիոն ութ հարյուր վաթսուհինգ հազար) ՀՀ դրամ:

3.2. Պայմանագրի 3.1-ին ենթակետում սահմանված գումարը Կատարողին հատկացվում է ըստ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային (աճողական) բաշխվածությանը համապատասխան՝ ամսական կտրվածքով:

Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը:

4. ԱՇԽԱՏԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

Կատարողը աշխատանքների կատարման մասին հաշվետվությունները ներկայացնում է Պատվիրատուին յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 15-ը, տարեկան հաշվետվությունները՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 10-ը՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թ. ապրիլի 1-ի N 176-Ն, ՀՀ ֆինանսների նախարարի 2013թ. փետրվարի 4-ի N 104-Ն և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. մարտի 28-ի N 324-Ն հրամանների ձևերի համապատասխան:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակ-

վում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

«ՀՀ կառավարության աշխատակազմ»
պետական կառավարչական հիմնարկ

Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության
հրապարակ, կառավարական տուն, 1
Բանկ՝ ՀՀ Ֆևգործառնական վարչություն
Հ/Հ 900011018398
ՀՎՀՀ 02505554

Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Ստեփանյան

Կ.Տ.



ԿԱՏԱՐՈՂ՝

«ՀՀ պետական կառավարման ակադեմիա»
պետական ոչ առևտրային կազմակերպություն

Հասցե՝ ք. Երևան, Կիլյան 8
Բանկ՝ «Ակրա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220003320227000
ՀՎՀՀ 00035088

Ռեկտոր՝

Ա. Լորյան

Կ.Տ.



Ռեկտոր՝